ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ՖՈՒՃՈՈՒ/ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Միեր Խեչումյան

2.Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Տարածքային Կառավարման և Տեղական Ինքնակառավարման Հարցերի վարչության պետ

3.Գործուղման վայրը և ժամկետները.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ֆուժիան նահանգ, ք. Ֆուճոու , 2025 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 11-ը:

4.Հրավիրող կողմը.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

5.Գործուղման նպատակը՝ (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվող մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում երկկողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում Ֆուժիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ 2025 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում Ֆուճոու քաղաքում «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին:

6.Քննարկված թեմաները.

Գործուղման ընթացքում Ֆուժիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի համապատասխան դասախոսների և ծրագրի ղեկավարների ու պատասխանատուների կողմից ներկայացվել են ՉԺՀ տնտեսական դիվանագիտության առանձնահատկությունները: Դասախոսությունների ընթացքում առանձնացվել և ընդգծվել են ՉԺՀ նախագահ , Չինաստանի Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Սի Ցզինպինի տնտեսական մտքերը, տնտեսական զարգացման հեռանկարները, կազմակերպվել են տեղում թեմատիկ այցելություններ:

Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ հետևյալ թեմաներով՝

- Չինաստանի հիմնական ազգային առանձնահատկությունները
- Թվային տնտեսության ոլորտում բիզնես միջավայրի բարելավման Չինական փորձը տարածաշրջանային մակարդակով
- Յուանի միջազգայնացման խթանիչ դերը առևտրի զարգացման գործում
- Չինաստանի տարածաշրջանային տնտեսական քաղաքականության և օրենսդրության զարգացումը բարեփոխումների մեկնարկից հետո
- Չինաստանի տեղական իշխանությունների քաղաքականությունը և ռազմավարությունները օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցում, ինչպես նաև հնարավորությունները և մարտահրավերները
- Չինաստանի պետական կառավարման համակարգի բարեփոխման փորձը
- Չինաստանի տեղական իշխանությունների արտաքին առևտրի կառավարման համակարգի պատմական զարգացումը և ապագա հեռանկարները
- Բժշկության և արդյունաբերության ինտեգրման միջոցով բարձրորակ տարածաշրջանային զարգացման խթանումը
- Ազատ տնտեսական գոտիների ստեղծման արդյունավետությունը

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայկական պատվիրակության կազմում էին 23 մասնակիցներ, մասնավորապես՝ ՀՀ ՏԿԵ նախարարության , ՀՀ էկոնոմիկային նախարարության և մարզպետների աշխատակազմերի ներկայացուցիչներ:

Դասընթացի ընթացքում կազմակերպվել են մի շարք այցելություններ և ծանոթություն չինական հին և նոր ժամանակների ճարտարապետությանը, մասնավորապես՝

- Այցելություն Ֆուճոու քաղաքի մշակութային ժառանգության թանգարան
- Այցելություն «Երեք թաղամաս և յոթ նրբանցք» տեսարժան վայր
- Այցելություն Չժունտին փողոց և ուսումնասիրություն ներդրումների ներգրավման տեղական կառավարման փորձի և առևտրային գոտիների համատեղ զարգացման ուղղությամբ
- Հյուրընկալություն CITIC բանկի կուսակցական կառուցման սրահ՝ ծանոթանալու տեղական իշխանությունների քաղաքական առավելությունների ինտեգրմանը տարածաշրջանային տնտեսական զարգացման մեջ
- Գուանչժոու քաղաքում կազմակերպվեց այցելություն «Չինաստանի հարավային էներգետիկ ցանց» կորպորացիա
- Այցելություն « Պեկին Ինքե » իրավաբանական ընկերություն (ք.Գուանչժոու)
- Այցելություն Յունցինֆան պատմական թաղամաս և ծանոթություն քաղաքի զարգացման պատմությանը
- Այցելություն Ֆուծիան նահանգի խոհանոցի և մշակույթի թանգարան, ծանոթություն խոհարարական ավանդույթներին և փիլիսոփայությանը
- Այցելություն ԼյանՑոու գյուղ և ծանոթություն տեղական թեյի արդյունաբերությանը

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ավարտելով Ֆուճոու քաղաքում «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացը՝ բոլոր մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

_Այդպիսիք առկա չեն

10.Ստորագրությունը, ամսաթիվը՝

Մեր Խեչումյան՝ 14.11.2025թ.